Հարցերին պատասխանում է քահանան...

Հարց 1. Արդյո՞ք գոյություն ունի մաքուր կյանք:

Պատասխան: Նայած թե մաքուր կյանք ասելով ինչ նկատի ունենք: Եթե նկատի ունենք կյանք, որի ընթացքում ոչ մի մեղք չես գործում, ապա՝ ոչ: Թեև տեսականորեն նման կյանք գոյություն ունի, սակայն գործնականում դա անհնար է: Իսկ եթե մաքուր կյանք ասելով նկատի ունենք զղջումով և ապաշխարությամբ առաջնորդվող կյանք, երբ մարդը, թեև մեղեր է գործում, սակայն անկեղծ զղջումով ու այդ մեղքերը շտկելով ապրում է իր կյանքը, ապա մաքուր կյանքով ապրել, այս իմաստով, հնարավոր է: Սա քրիստոնյայի ճանապարհն է:

Հարց 2.Արդյո՞ք ճիշտ է այն պնդումը, որ ատելությունը մահացու մեղք է, եթե այո, ինչպե՞ս ազատվել դրանից

Ոչ, ատելությունը մահացու մեղքերի ցուցակում չկա, մահացու մեղք չէ: Ատելությունը հոգու զորություններից մեկն է: Այն ինքն իրենով ո'չ մեղք է, ո'չ էլ առաքինություն: Նայած թե ատելությունն ինչին ես ուղղում: Եթե այն ուղղում ես դեպի մարդը, բարիքը, առաքինությունն, ապա այս դեպքում ատելությունը վերածվում է մեղքի: Իսկ եթե այն ուղղում ես անարդարությունը, չարիքը, մեղքը և այլն, այն դառնում է առաքինություն: Ուստի ատելությունից ազատվել պետք չէ, պետք է այն ուղղել դեպի չարիքը և մեղքը:

http://holytrinity.am/

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եփեսացիներին 5 , 15-33

15Տեսէք, թէ ինչպիսի զգուշութեամբ պէտք է ընթանաք. ոչ թէ
ինչպէս անմիտներ, այլ՝ ինչպէս իմաստուններ.16ժամանակն
օգտագործեցէ՛ք, քանզի օրերը չար են. 17դրա համար անմիտ մի՛
եղէք, այլ իմացէ՛ք, թէ ի՛նչ է Տիրոջ կամքը։ 18Եւ մի՛ հարբէք գինով.
դրա մէջ զեխութիւն կայ. այլ մանաւանդ լցուեցէք Հոգո՛վ, 19որպէսզի
խօսէք միմեանց հետ սաղմոսներով, օրհներգութիւններով եւ
հոգեւոր երգերով, որպէսզի երգէք եւ ձեր սրտերում սաղմոս ասէք
Տիրոջը։ 20Գոհութի՛ւն յայտնեցէք ամէն ժամ ամէն ինչի համար Հօրը
եւ Աստծուն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով։ 21Հնազանդուեցէ՛ք
միմեանց Քրիստոսի երկիւղով։22Կանայք իրենց մարդկանց թող
հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, 23որովհետեւ
մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ
ինքն է Փրկիչը այդ մարմնի։ 24Եւ ինչպէս եկեղեցին հնազանդւում է
Քրիստոսին, նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց
մարդկանց ամէն ինչում։ 25Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս
որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, 26որ
սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, 27որպէսզի նա իր առաջ
փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ
աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ եւ
անարատ։ 28Նոյն ձեւով մարդիկ պարտաւոր են սիրել իրենց
կանանց իբրեւ իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն
է սիրում. 29որովհետեւ ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում եւ
խնամում է այն, ինչպէս որ Քրիստոս՝ եկեղեցին. 30քանզի
անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից եւ նրա
ոսկորներից։ 31«Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը եւ
պիտի գնայ իր կնոջ յետեւից. եւ երկուսը պիտի լինեն մէկ
մարմին»։ 32Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ

եկեղեցու վերաբերեալ: [33]Դուք էլ նոյնպէս ամէն մէկդ նո՛յնը արէք,
որպէսզի իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը,
եւ կինը երկնչի իր մարդուց:

Ղուկասի Ավետարան 8, 49-57

[49]Եւ մինչ նա խօսում էր, ժողովրդապետի տնից մէկն եկաւ եւ
Յայրոսին ասաց. «Աղջիկդ մեռաւ, յոգնութիւն մի՛ պատճառիր
դրան»: [50]Իսկ երբ Յիսուս լսեց, նրան պատասխանեց եւ ասաց. «Մի՛
վախեցիր, միայն հաւատա՛, եւ նա կ՚ապրի»: [51]Եւ նրա տունը
մտնելով՝ ոչ ոքի չթողեց ներս մտնել, բացի Պետրոսից, Յակոբոսից,
Յովհաննէսից եւ երեխայի հօրից ու մօրից: [52]Ամէնքը լալիս եւ ողբում
էին նրա վրայ: Եւ նա ասաց. «Լաց մի՛ եղէք, որովհետեւ մեռած չէ, այլ
ննջում է»: [53]Իսկ նրանք ծաղրում էին նրան, որովհետեւ գիտէին, որ
մեռած էր: [54]Եւ ամենքին դուրս հանելով՝ բռնեց նրա ձեռքից, գոչեց եւ
ասաց. «Վե՛ր կաց, կանգնի՛ր, ո՛վ մանուկ»: [55]Եւ նրա հոգին
վերադարձաւ, եւ մանուկը իսկոյն կանգնեց: Եւ Յիսուս հրամայեց, որ
նրան ուտելու բան տան: [56]Եւ նրա ծնողները զարմացած մնացին,
իսկ նա պատուիրեց, որ ոչ ոքի չասեն, ինչ որ եղել էր:

Մանկական էջ...

Այսուհետ մեր թերթում կտեղադրենք սկանվորդներ Մարի Մաշինկա ամսագրից, հուսով ենք ձեր երեխաներին դուր կգա և ցանկություն կառաջացնի՝ հայերեն սովորելու...



КОНЦЕНТРАЦИОННЫЕ ЛАГЕРЯ

КОНЦЕНТРАЦИОННЫЕ ЛАГЕРЯ ДЛЯ ДЕПОРТИРОВАННЫХ АРМЯН, созданы турецкими властями в 1915 на пути следования караванов депортированных армян в Сирию и Месопотамию. В Сирии были построены концентрационные лагеря для депортированных армян в Хаме, Хомсе и под Дамаском, через которые с августа 1915 до 1919 прошли свыше 130 тыс. армян. Основной поток депортированных армян был направлен к востоку от Алеппо вдоль Евфрата. Были созданы концентрационные лагеря для депортированных армян вокруг городов Баб, Мескене, Ракка, Зиарет, Семга, Рас-ул-Айн, и в конечном пункте караванов смерти—Дейр эз-Зоре. В этих лагерях скопилось значительное количество депортированного населения. Они содержались под открытым небом, их лишали воды и пищи, голод вынуждал их есть траву. Голод и эпидемии стали причиной высокой смертности, в особенности среди детей. По свидетельству различных источников, в некоторых лагерях из десятков тыс. депортированных оставались в живых несколько тысяч или сотен человек. В марте 1916 турецкое правительство решило уничтожить оставшихся в живых депортированных армян. К этому времени в лагерях вдоль Евфрата и в Дейр эз-Зоре оставалось до 200 тыс. человек В августа 1916 их депортировали в направлении Мосула, где людей уничтожали в пустынях Марате и Сувар; в ряде мест женщин, стариков и детей загоняли в пещеры и сжигали заживо. К концу 1916 лагеря вдоль Евфрата перестали существовать. К этому времени консул США в Мосуле насчитывал только 8 тыс. выживших, а консул Германии в Дамаске — 30 тыс. Оставшиеся в живых в последующие годы обосновались в Киликии, перебрались в страны Европы и Ближнего Востока.

Նյութը պատրաստեց՝ Մինաս Մովսեսյանը

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈԶԸ

«Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և քո աղջիկը կապրի» (Ղուկ. 8,50):

Ինքնաճանաչման, թե՞ աշխարհ գալու առաջին իսկ պահից մարդ-արարածը ձգտում է երջանկության: Այդ երջանկությունը նա հաճախ փնտրում է երկրային կյանքում՝ հարստության, փառքի, մարմնական սիրո, խրախճանքի... մեջ: Բայց, ինչպես ժողովողը կասեր. ***«Ունայնություն ունայնությանց»,*** քանզի առանց Տիրոջ չկա եւ չի կարող լինել ո՛չ հոգու հանգստություն, ո՛չ երջանկություն:

Մարդը խղճի հանգստություն է փնտրում, բայց աշխարհի սին ու դատարկ հոգսերը շեղում են նրան, ստիպում անիմաստ կերպով ծախսել Տիրոջ կողմից իրեն տրված այդքան թանկ ժամանակը, եւ խղճի հանգստություն ձեռք բերելու փոխարեն մնում է դատարկածեռն ու հոգսերին գերի: Մարդ-արարածն իր յուրաքանչյուր մեղքի համար պետք է փոխհատույց լինի կամ այս կյանքի ընթացքում, կամ հանդերձյալ: Մենք հաճախ մոռանում ենք մահվան եւ հավերժական կյանքի գոյության մասին այնինչ մեզ համար ամենաօգտակար բանը կլիներ հավերժական կյանքին պատրաստվելը:

Յուրաքանչյուր հիվանդություն, որ տրվում է մարդուն, կարող է ունենալ ե՛ւ երկրային, ե՛ւ երկնային պատճառ: Մարդը, որ միասնությունն է հոգու եւ մարմնի, հիվանդանում է այն ժամանկ, երբ խախտվում է այդ երկու տարրերի հավասարակշռությունն ու ներդաշնակությունը: Եվ, քանի որ Աստված անսահմանորեն ողորմած է ու գթասիրտ, եւ քանի որ Աստված ճանաչում է Իրեն ապավինած յուրաքանչյուր մարդու եւ լավ գիտե, թե ինչ է անհրաժեշտ նրան, ուրեմն այն, ինչ պատահում է մեզնից ամեն մեկին, բարի է եւ արդար:

Ի՞նչ է հիվանդությունը: Ավետարանը եւ հայրերը ուսուցանում են, որ այն կամա, թե ակամա, գիտակցաբար, կամ անգիտակցաբար գործած մեղքի արդյունք է:

Արդ, երբ արժանավոր անձանց աղոթքների միջոցով բժշկվում է հիվանդությունը, նրա հետ միասին վերցվում են նաեւ հիվանդության պատճառ դարձած մեղքերը: Այս օրենքը նախ մեր Տերը մեզ սովորեցրեց, երբ անդամալույծին ասաց. ***«Քո մեղքերը թող ներված լինեն» (Մարկ. 2.5):*** Սկզբում մեղքի պատճառը վերացվեց, ապա բժշկեց նրա մարմինը՝ դրանով ցույց տալով, որ հիվանդությունը մեղքից էր առաջացել, ինչպես որ նաեւ մեկ ուրիշ անդամալույծի ասաց. ***«Ահա առողջացար, այլեւս մի մեղանչիր, որպեսզի ավելի չար բան չպատահի քեզ»(Հովհ. 5.14):***

Շատ իմաստուններ են փորձ արել պատասխանելու այն հարցին, թե ո՞րն է արմատը ցավի եւ հիվանդության, որտեղի՞ց է գալիս ապականացու բնությունը մարդու, ինչպե՞ս պահել իրեն հիվանդության ժամանակ: Փիլիսոփաները փորձել են հասկանալ կյանքի ու մահվան առեղծվածը, բացատրել հիվանդությունների ոչ երկրավոր պատճառը, բայց մնացել են անպատասխան, եւ կամա, թե ակամա եկել, խոնարհվել են Քրիստոսի խաչի ու Խաչյալի առաջ, հասկանալով, որ Նա է Ճանապարհը եւ միայն Նա գիտի ճշմարիտ պատասխանը մարդկությանը հետաքրքրող բազում հարցերի: ***«Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար, եւ լուսավորում է իմ շավիղները»,(Սաղմ. 118,105):***

Իսկ Քրիստոսի բազում ճգնավոր հետեւորդներ ապրած կյանքով ցույց են տվել, թե ինչ է քրիստոնեությունը եւ ինչպես ընդունել նեղությունները, ինչպես տանել վշտերն ու ցավերը: Նրանք Քրիստոսի հավատքի ճշմարիտ եւ կենդանի իրագործողներն են եղել երկրի վրա, ապրել են հանուն Քրիստոսի, լիացած Սուրբ Հոգու շնորհներով:

Նրանք Տիրոջ պատվիրաններին հավատարիմ են մնացել տառապանքի, ցավի, նեղության, հիվանդության ժամանակ եւ իրենց վարքով հաստատել են, որ փրկությունը համբերության, երկայնամտության եւ Քրիստոսի ողորմածությանն ապավինելու մեջ է:

Քրիստոսին հավատալ, նշանակում է խոնարհաբար եւ համբերատարությամբ տանել բոլոր փորձությունները: Անհնար է, որ քրիստոնյան իր կյանքն Աստծուն նվիրելով զերծ մնա փորձություններից: ***«Որդեակ, եթե նվիրվում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձությունների պատրաստիր: Ուղղիր քո սիրտը, համբերիր եւ շփոթության մի մատնվիր աղետների ժամանակ» (Սիրաք 2,12):*** Հայերն ասում են՝ հիվանդ մարդը ինչ որ չափով Աստծուց հեռացած կամ ինչ որ ձեւով ճշմարիտ ճանապարհից շեղված մարդն է: Եվ առողջանալու համար առաջին հերթին պետք է ապաշխարել, խոստովանել մեղքերը:

Մեր մեղանչական բնությունը մաքրելու լավագույն միջոցը մեղքերը խոստովանելն է: Աստված ամենագետ է, բայց երբ Ադամը մեղանչեց, Տերը նրան հարցրեց. ***«Ո՞ւր ես» (Ծննդոց 3,9):*** Այդ հարցի պատճառը ոչ թե այն էր, որ Աստված չգիտեր նրա ուր լինելը, այլ ուզում էր նրա խոստովանությունը լսել: Ահա թե որքան կարեւոր է գիտակցաբար մեղքերն Աստծու առաջ խոստովանելը եւ մաքրվելը, քանզի Նա է մեզ մաքրագործում հոգեւոր եւ մարմնական ցավերից:

Այստեղ, ինչպես եւ ամենուր, անչափ կարեւոր է հավատը: Պատահական չէ, որ երբ մարդիկ մոտենում էին Քրիստոսին Նրանից մարմնական ապաքինում

Решение об истреблении армян было принято заранее, однако обстоятельства не давали возможности для осуществления этого святого намерения. В настоящее время, поскольку устранены все препятствия, настал час для очищения нашей родины от этого опасного элемента. Мы требуем не проявлять по отношению к этим отверженным ни малейшего сострадания, уничтожать их, полностью искоренить в Турции само слово армянин. Сделайте все, чтобы осуществление этой программы было возложено на преданных патриотов нашей родины". Наим-бей вспоминал: - Точная дата и адресат этого приказа мне неизвестны, потому что я держал в руках только копию. Но по всему видно, что министр внутренних дел (Талаат-паша) лично отправил его губернатору, а тот, в свою очередь, в ведомство по депортации".

Этот документ достиг Алеппо раньше, чем туда был назначен Абдуллахад-Нури-бей, то есть в то время, когда губернатором был Джелал-бей. После ознакомления с его содержанием Джелал телеграфировал в Константинополь: "Я губернатор, а не палач". После этого он немедленно был отстранен от должности.

(продолжение см в следующем выпуске)

ХРОНОЛОГИЯ

<u>Ноябрь 1901 год 6 ноября</u>

Отряд Андраника осажден в монастыре турецкими войсками. В течение трех последующих дней турки пытаются штурмовать монастырь, но понеся потери, прекращают попытки выбить гайдуков из монастыря. [3: стр. 83]

<u>Середина ноября</u>

Турецкие власти вступают в переговоры с гайдуками. Последние требуют освобождения политических заключенных и компенсации жителям Муша за убийства и разорения. Султан обещает положительно решить все вопросы, одновременно подтягивая к монастырю артиллерию. [3: стр. 83]

<u>27 ноября</u>

Во избежание возможного разрушения монастыря от артиллерийского огня, отряд под покровом ночи тайно покидает монастырь, разделившись на небольшие группы. Инцидент в монастыре Аракелоц хотя и поднял боевой дух армян по всей стране, но также доказал неэффективность разрозненных выступлений партизанских отрядов. [3: стр. 83]

http://www.genocide.ru/

ТЕЛЕГРАММЫ

Данные телеграммы являются тяжкими обвинениями в адрес Турецкого государства. Они свидетельствуют о том, что насильственное выселение было лишь одним из этапов на пути к окончательному истреблению армян.

"Место их высылки - НЕБЫТИЕ!" - восклицал Талаат в одной из телеграмм.

15 сентября 1915 года префект Алеппо получил телеграмму следующего содержания:

"Ранее было сообщено, что Правительство по приказу Джемиета(Иттиад- общество младотурок) решило стереть с лица земли всех армян, проживающих в Турции. Те, кто не подчинится этому приказу, не должны служить в руководящих органах. Не различая женщин, детей, больных и немощных, не останавливаясь перед самыми жестокими мерами, не прислушиваясь к голосу совести, покончить с ними".

Министр внутренних дел Талаат КОПИЯ №1

Приказ, хранящийся в тайных бумагах ведомства по депортации:

"Представляющий многовековую опасность армянский элемент потрясает твердые основы нашей государственности и уже давно не может быть терпимым для нашего правительства.

ակնկալելով, Հիսուս նրանց ասում էր. ***«Քո մեղքերը քեզ ներված են» (Մատթ. 9,2):*** Կամ, որ նույնն է. ***«Ըստ ձեր հավատի թող լինի ձեզ» (Մատթ. 9,29):*** Առանց հավատի չեն կատարվում հրաշալի այս բժշկությունները: Ամուր հավատն առ Աստված, բոլոր դեպքերում Աստծուն ապավինելը ծնում են ե՛ւ հույս, ե՛ւ համբերություն:

Հենց այդ համբերությունը, ամուր հավատքն ու վստահությունն էին, որոնք Օստիացի Հոբին հնարավորություն տվեցին փորձության մեջ չմեղանչել եւ դիմագրավել բոլոր տառապանքներին: Նա, որ կորցրեց իր յոթը տղաներին ու երեք աղջիկներին, իր հոտի յոթ հազար ոչխարներին, երեք հազար ուղտերին եւ բազում այլ հարստություններ, իսկ ինքը հիվանդացավ անտանելի հիվանդությամբ, երբեք չկորցրեց հույսը: Նա պատառոտեց հագուստները, կտրեց իր գլխի մազերը եւ գետին փռվելով՝ երկրպագեց Տիրոջն ու ասաց. ***«Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, տերն էլ հետ առավ: Ինչպես որ հաճելի էր Տիրոջը, այնպես էլ եղավ: Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը»(Հոբ. 1,20-23):*** Եվ նրան պատահած այս բոլոր դեպքերի ժամանակ Հոբը չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամություն հանդես բերեց Աստծո հանդեպ:

Ուրեմն հիվանդությունները, նեղությունները, տառապանքները տանենք համբերությամբ, սիրով, եթե կարող ենք, նաեւ՝ ուրախությամբ, դրանք ծառայեցնելով հոգու փրկության անչափ կարեւոր գործին: ***«Եվ ես ասում եմ ձեզ՝ ով որ հավատա ինձ, հավիտենական կյանք կնդունի» (Հով.6,47):***

Խնամո՛ղ արարածների, պահի՛ր Քո Խաչի նշանով իմ հոգին և մարմինը մեղքերի պատրանքներից, դևերի փորձություններից, անիրավ մարդկանցից և հոգու ու մարմնի բոլոր վտանգներից. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Պահապա՛ն բոլորի Քրիստո՛ս, Քո աջը թող հովանի լինի ինձ վրա գիշեր թե ցերեկ, թե՛ տանը նստելիս, թե՛ ճանապարհ գնալիս, ննջելիս և թե՛ արթնանալիս, որպեսզի երբեք չսասանվեմ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս: ***Ն.ՇՆՈՐՀԱԼԻ «Հաւատով խոստուանիմ», (գլ. 14.15)***

Ծայրագույն Վարդապետ Հայր Պետրոս Պետրոսյան

Մոսկվա 9 նոյեմբերի 2014թ.

Ամենասուրբ Երրորդություն

Ըստ Հայ եկեղեցու դավանաբանության՝ Աստված Ամենասուրբ Երրորդություն է. մի Աստվածություն՝ երեք Անձերի մեջ՝ Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ Հոգի Աստված:

Ամենասուրբ Երրորդությունը Ամենասուրբ Աստվածության երեք Անձերի անբաժանելի միությունն է:

Աստված անսկիզբ է և անեղ: Անսկիզբ նշանակում է սկիզբ կամ ծագում չունեցող, այսինքն՝ ինքնագո, իսկ անեղ նշանակում է անստեղծ, այսինքն՝ որևէ մեկի կողմից չստեղծված, չեղած: Որդին ծնունդ է Հորից: Աստվածային ծնունդն անըմբռնելի է և խոսքով չի բացատրվում: Երբ ծնունդ է ասվում, պետք չէ հասկանալ մարդկանց ծնունդի սովորական կերպերը, այլ՝ ինչպես լույսից լույս է ծնվում, կամ կրակից՝ կրակ:

Սուրբ Հոգին անեղ, անժամանակ ու կատարյալ է: Նա ծնունդ չէ, այլ բխում է Հայր Աստծուց, Էակից է Հորն ու փառակից Որդուն:

Ավետարանում Սուրբ Հոգին ներկայացվում է որպես մի զորություն, որ գործում է մարդկանց մեջ զանազան կերպերով: Սուրբ Հոգին մի դեպքում ներկայացվում է որպես շունչ, քամի, մի ուրիշ դեպքում՝ աղավնի, հրեղեն լեզու, ամպ և այլն: Այս ամենը բնորոշում է ոչ թե նրա էությունը, այլ՝ գործունեությունը: Իբրև կատարյալ Աստված Նա հավասար է Հորը և Որդուն:

Հայրը, Որդին ու Սուրբ Հոգին համագոյակից են, ունեն մեկ բնություն, մեկ կամք, մեկ իշխանություն, արարչակից են ու հավասար:

Ինչպես օրինակ արևը. նախ՝ արևի գունդը, երկրորդ՝ լույսը և երրորդ՝ ջերմությունը. թեպետ երեք անուն կա, բայց երեքն էլ արև անունով ենք հիշում, այսինքն՝ արևի գունդը, արևի լույսը և արևի ջերմությունը, որոնք ամբողջը մեկ արև են և ոչ՝ երեք, որովհետև մեկը մյուսից բաժանված չեն: Նույնպես Երրորդության մեջ երեք անուն ենք հիշում՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի. բայց երեքն էլ մեկ Աստծո անունով ենք հիշում, այսինքն՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված: Երեքն էլ մեկ են և ոչ՝ երեք Աստված, որովհետև մեկը մյուսից բաժանված չեն, և երեքը մեկ բնություն, մեկ կարողություն ունեն:

Երեք անձերի մեջ ամենևին չկա մեծ կամ փոքր: «Սա է հավատի կատարելությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն ճանաչել երեք Անձ և մի Աստված, Նրանցից ոչ մեկին առավել կամ նվազ չհամարել, կամ առաջ կամ հետո, այլ հարթ, հավասար և ամեն ինչում միանման և նույն բնությամբ» (Խոսրով, Մեկն. Պատ.):

Մեր հավատքը խելամուտ է դարձնում մեզ, ու մենք աստվածային կյանք ու սեր ենք վայելում Սուրբ Երրորդության շնորհների միջոցով: Մենք ստանում ենք այդ կյանքը Հոր Աստծուց, որ մեր Արարիչն է, Որդի Աստծուց, որ մեր փրկիչն է, Հոգի Աստծուց, որ մեր քավիչն ու որդեգրիչն է: Սուրբ Երրորդության յուրաքանչյուր անձ Աստծո ամբողջ էության հայտնությունն է և ունի իր մեջ աստվածային բոլոր կատարելությունները:

Գ. Սուգիկյան

Հոդվածն ամբողջությամբ կարող եք կարդալ հետևյալ կայքում

http://holytrinity.am/